

ՀՀ ԿՐԹՈՒ ԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒ ԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒ ԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼ ՍԱՐԱՆ

ԲԱԼՅԱՆ ՄԻՆԱՍ ԿԱՐԱՊԵՏԻ

ՈՒՆՏՐԱԿՆԱԿԱՆ ԴԻՖՐԱԿՏԻՎ ԱԼ ԻՔՍՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ, ԴԻՆԱՄԻԿԱԿԱՆ
ԿՈՐԵՐԵՆՏ ՅՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԵՎ ԻՆՏԵՐՖԵՐԱԶԱՓՈՒ ԹՅԱՆ ՏԵՍՈՒ ԹՅՈՒՆ

Ա.04.07 – «Կոնդենսացված վիճակի ֆիզիկա»
մասնագիտությունը ամբ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների
դոկտորի
գիտական աստիճանի հայ ցման արեւախոսությունը ան

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2017

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ И НАУКИ РА
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

БАЛЯН МИНАС КАРАПЕТОВИЧ

ТЕОРИЯ РЕНТГЕНОВСКИХ ДИФРАГИРОВАННЫХ ВОЛНОВЫХ ПОЛЕЙ,
ДИНАМИЧЕСКОЙ КОГЕРЕНТНОЙ ГОЛОГРАФИИ И ИНТЕРФЕРОМЕТРИИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени
доктора физико-математических наук по специальности
01.04.07 – “Физика конденсированного состояния”

ЕРЕВАН 2017

Արեւախոսությունը ան թեման հաստատվել է Երևանի պետական
համալսարանում:

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր,
պրոֆեսոր Կ.Գ.Թրոնկի,
ֆիզ.մաթ.գիտ. դոկտոր,

արոճեսոր Ռ.Բ.Ալ ալերոյ ան,
Ֆիզ.մաթ.գիտ դոկտոր,
արոճեսոր Ա.Ժ.Մուրադյ ան

Առաջատար կազմակերպւթյ ոււն՝ ԶԶ ԳԱԱ Ֆիզիկական
հետազոտությ ոււննէրի ինստիտուտ

Պաշտպանությ ոււնը տէրի կոոււէնա 2017թ. հուլիսի 8-ին, ժամը 11⁰⁰-ին
Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի 049 մասնագիտական
խորհրդի նիստոււմ: Զասցէն՝ Երևան 0025 Ալ էք Մանուկյ ան 1

Ատէնախոսությ անը կարէլ ի է ծանոթանալ ԵՊՔ գրադարանոււմ:

Սեղմագիրը ցրված է 2017թ. հուլիսի 7-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
թէկնածու, դոցէնտ

Ֆիզ.մաթ. գիտ

Վ.Պ Քալանտարյ ան

Тема диссертации утверждена в Ереванском государственном
университете.

Официальные оппоненты:

доктор физ.мат.наук,
профессор К.Г.Труни,
доктор физ.мат.наук,
профессор Р.Б.Алавердян,
доктор физ.мат.наук,
профессор А.Ж.Мурадян

Ведущая организация:
РА

Институт физических исследований НАН

Защита состоится 8 июля 2017г. в 11⁰⁰ часов на заседании
специализированного совета по физике 049 Ереванского государственного
университета по адресу: Ереван 0025, ул. Алека Манукяна 1
С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕГУ.

Автореферат разослан 7 июня 2017г. .

Ученый секретарь
специализированного совета

кандидат физ.мат.наук, доцент
В.П. Калантарян

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ռենտգենյան ճառագայթները, շնորհիվ նյութի մեջ ներթափանցման հատկության, լայնորեն օգտագործվում են նյութը չքայքայող հետազոտության ներդրում: Ժամանակակից դիֆրակտային մեթոդներով բյուրեղային և ոչ բյուրեղային նյութերի կառուցվածքի հետազոտությանը, ինչպես նաև տրված պարամետրերով (մեներանգություն, կոլիմացիա և այլն) ռենտգենյան փնջերի ստացումը և կիրառումն էապես կախված են կարճ-ալիքային ճառագայթման և նյութի հետդրափոխազդեցության մասին մեր ունեցած գիտելիքներից:

Ռենտգենյան ճառագայթների դիսամիկական դիֆրակցիայի ուսումնասիրությունները կատարյալ և դեֆորմացված բյուրեղներում ստեղծեցին դիսամիկական դիֆրակցիայի տեսության զարգացման նախադրյալներ:

Ռենտգենյան ճառագայթների դիսամիկական տեսությունն իր սկզբնական տար-բերակում զարգացվել է անվերջ ճակատով, հարթ մեներանգ ալիքի համար: ճոճման կորի կիսալայնության և անդրադարձման գործակիցների համար այս տեսությունը տալիս է փորձի հետհամընկնող արդյունքներ [1-3]:

Յետագայում զարգացվել է Կատոյի գնդալիքային տեսությունը [4] և դրա նոր տար-բերակը՝ ԱՖանասև-Կոնի տեսությունը [5], որում կանխատեսված նոր երևույթներից են ալիքների կիզակետումը և անոմալ ճոճմանակային գծերի ի հայտ գալը: Ալիքների վարքի առանձնահատկությունները բյուրեղում ուսումնասիրված են [6] աշխատանքում, որտեղ հայտնաբերվել է նաև ալիքների կիզակետումը բյուրեղում և դրա կապը բյուրեղից դուրս՝ վակուումում կիզակետման հետ:

Բնական և արհեստական ճանապարհով առաջացած բյուրեղները պարունակում են արատներ և դեֆորմացիաներ, ուստի անհրաժեշտ է հաշվի առնել բյուրեղների անկատարելիությունը դիսամիկական դիֆրակցիայի պայմաններում: [7]-ում Լաուենի հարթ ալիքային տեսության փոքր-ինչ ձևափոխված տարբերակով թույլ դեֆորմացված բյուրեղներում զարգացվել է Փենինգի և Փոլդերի դիսամիկական դիֆրակցիայի տեսությունը, իսկ [8]-ում առաջարկվել է Կատոյի դիսամիկական դիֆրակցիայի երկրա-չափական օպտիկայի տեսությունը դանդաղ փոփոխվող դեֆորմացիաներով բյուրեղներում:

Կամայական ալիքային ճակատով ալիքների դիսամիկական դիֆրակցիայի Տակագիի հավասարումները և համապատասխան ալիքային տեսությունը դեֆորմացված բյուրեղներում զարգացվել է [9] աշխատանքում: Այս հավասարումները երկալիքային դեպքում հանգում են առանձին լայնույթների համար գրված երկրորդ կարգի մասնական ածանցյալներով հիպերբոլական հավասարումների, որոնց ընդհանուր լուծումը բյուրեղում կարելի է արտահայտել մակերևույթին ընկնող ալիքի լայնույթի և Գրին-Ռիմանի Ֆունկցիայի փաթեղի տեսքով: Ճշգրտորեն որոշվել են Գրին-Ռիմանի Ֆունկցիաները կատարյալ բյուրեղում, կատարյալ բյուրեղում Բրեգի երկրաչափության դեպքում, համասեռ ճկված բյուրեղում, համասեռ ճկված բյուրեղում Բրեգի երկրաչա-

փուլ թյան դեպքում [10]:

Տակագիի հավասարումների էյկոնալի տեսությունը զարգացվել է [11]-ում: Այն հնարավորություն է տալիս գտնելու ինչպես էյկոնալը, այնպես էլ լայնույթներն էյկոնալի տեսություն ասիմպտոտական մոտավորության կամայական կարգում:

Շատ դեպքերում, երբ հնարավոր չէ գտնել Տակագիի հավասարումների ճշգրիտ լուծում, զարգացվել են թվային եղանակներ: Տակագիի հավասարումների թվային լուծման համար օգտագործվում է կեսքայլային եղանակը [12], իսկ [13]-ում օգտագործվել է փոփոխական քայլով կեսքայլային եղանակը: Սակարևոր հանգամանք է, քանի որ ներբյուրեղական դիֆրակտոնոլալիքների փոփոխման արագությունը տարբեր է Բորմանի եռանկյան տարբեր տեղամասերում, ինչպես նաև արատների (օրինակ՝ դիսլոկացիայի) միջուկից տարբեր հեռավորություններում:

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում այն տեսությունները, որոնք նկարագրում են դինամիկական դիֆրակցիան վիճակագրորեն բաշխված փոքր չափերի արատներով բյուրեղներում, մակերևույթից անդրադարձած հայելային ալիքների առկայությունը, կամ երբ Բրեգի անկյունը մոտ է $\pi/2$ -ի [12], բյուրեղում անդրաձայնային տատանումների առկայությունը կամ գերցանցերում, ինչպես նաև փնջի կիզակետումը ոչ հարթ մուտքի ու ելքի մակերևույթներով բյուրեղով:

Վերը նշված բոլոր տեսություններում (բացի [14,15]-ից) ընկնող ալիքի անհամասեռությանը հաշվի է առնվում դիֆրակցիայի հարթության մեջ: Բայց կան իրավիճակներ (ինչպես, օրինակ, լայն տարամիտող փնջի դիֆրակցիայի դեպքում), երբ կարևոր է դառնում ընկնող ալիքի ճակատի կորությունն ինչպես դիֆրակցիայի հարթության մեջ, այնպես էլ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ: Ընկնող լայն տարամիտված փնջի դիֆրակցիայի տեսությունն Լաուեի երկրաչափության դեպքում տրվել է [16]-ում, իսկ Բրեգի երկրաչափության դեպքում՝ [17]-ում: Խնդիրն, ըստ էության, հանգել է նրան, որ մուտքի մակերևույթին գտնվել են ճիշտ Բրեգի պայմանին բավարարող բոլոր ճառագայթները, որոնց համար համապատասխան դիֆրակցիայի հարթության մեջ լուծվել է դինամիկական դիֆրակցիայի խնդիրը բյուրեղի հաստության վերահաշվառմամբ:

Ռենտգենյան դինամիկական դիֆրակցիայի քվանտամեխանիկական տեսությունը զարգացվել է [18]-ում, բյուրեղներում ռենտգենյան ճառագայթման դիֆրակցիայի դաշտի քվանտային տեսությունը՝ [19]-ում, իսկ բազմալիքային ռենտգենյան դինամիկական դիֆրակցիայի քվանտային տեսությունը՝ [20]-ում:

Երրորդ սերնդի սինքրոտրոնային ճառագայթումը և ազատ էլեկտրոնային լազերների առաքած ռենտգենյան փնջերը բավականաչափ ուժգին են, ուստի կարևոր է դառնում նաև նյութի հետ ճառագայթման ոչ գծային փոխազդեցությունը: Այս ուղղությամբ այժմ կատարվում են ինչպես տեսական, այնպես էլ փորձարարական աշխատանքներ: Ուսումնասիրվում են և՛ երկրորդ կարգի ոչ գծային երևույթները, և՛ ռենտգենյան ճառագայթման և նյութի երրորդ կարգի ոչ գծային փոխազդեցությունը: Երկրորդ հարմոնիկի գծային երկալիքային դիֆրակցիան դիտարկված է [21]-ում, հարթ ռենտգենյան ուժգին ալիքի կինեմատիկական բրեգյան

դիֆրակցիան երկրորդ կարգի ոչ գծային բյուրեղում պարամետրական կոնվերսիայի պայմաններում ուսումնասիրվել է [22]-ում: Ուժգին ռենտգենյան ճառագայթման ուղիղ անցումը բյուրեղով երրորդ կարգի ոչ գծայնության պայմաններում ուսումնասիրվել է [23]-ում: Կատարվում են նաև նյութի և ռենտգենյան ճառագայթման այլ տեսակի ոչ գծային փոխազդեցությունների (երկֆո-տոնային կլանում [24], ճառագայթային [25] և ջերմային քայքայում [26, 27] և այլն) ուսումնասիրություններ:

Ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերներն առաքում են կարճ՝ 0,1–0,2 Ֆվ տևողությամբ իմպուլսներ, որոնք տարածական լրիվ կոհերենտ են: Իմպուլսների միջև ժամանակային միջակայքը 0,3–0,5 Ֆվ է: Մեկ «կրակոցի» ընթացքում առաքվում են 100–200 Ֆվ ընդհանուր տևողությամբ, միմյանց հետ ոչ կոհերենտ այդպիսի կարճ իմպուլսներ: Այս տեսանկյունից կարևոր է դառնում ռենտգենյան իմպուլսների տարածման և դիֆրակցիայի գծային և ոչ գծային ժամանակային հավասարումների ստացումը և կիրառությունը: Գծային ժամանակային դինամիկական դիֆրակցիայի Տակագիի հավասարումները կատարյալ և դեֆորմացված բյուրեղներում առաջին անգամ ստացվել են [28]-ում: Ժամամանակային հավասարման լուծումները դեֆորմացված բյուրեղում Գրինի ֆունկցիայի և ընկնող ալիքի լայնության փաթույթի տեսքով և՛ Լաուենի և՛ Բրեգի երկրաչափության պայմաններում, ստացվել են Լապլասի ձևափոխության կիրառմամբ [29]-ում: Երրորդ սերնդի ռենտգենյան սինքրոտրոնային աղբյուրների և ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերների ճառագայթման տարածման և դիֆրակցիայի ուսումնասիրության հետ կապված գծային ժամանակային դիֆրակցիայի ուսումնասիրություններ կատարվել են [26, 30]-ում: Դիտարկվել են Դիրակի ծ-ֆունկցիայի և Գաուսի օրենքով ժամանակից կախված ընկնող իմպուլսների դեպքերը: Ազատ էլեկտրոնային լազերի գործողության հետևանքով բյուրեղի տաքացման ազդեցությունը գծային դիֆրակցիայի վրա ուսումնասիրվել է [27]-ում: Քանի որ ոչ գծային ժամանակային դիֆրակցիան ուսումնասիրված չէ, ապա հրատապ է դառնում ոչ գծային ժամանակային դինամիկական դիֆրակցիայի հավասարումների ստացումը և դրանց լուծումների ուսումնասիրությունը հետաքրքրություն ներկայացնող վերը նշված դեպքերում:

Դինամիկական տեսության շրջանակներում առանձնակի ուշադրություն է հատկացվել ներբյուրեղային դաշտերի ժամանակային (երկայնական) և տարածական (լայնահանգ) կոհերենտ հատկությունների ուսումնասիրմանը [27, 31-33]:

Բացի դիֆրակցիայի ընդհանուր հավասարումների զարգացումից, կարևոր են նաև այն տեսական հետազոտությունները, որոնք նվիրված են ռենտգենաօպտիկական համակարգերի տեսության զարգացմանը: Ռենտգենաօպտիկական կարևոր համակարգեր են գիտական ու կիրառական մեծ հետաքրքրություն ներկայացնող ռենտգենյան երկթիթեղ և եռաթիթեղ ինտերֆերաչափները [34]: Այս եղանակով հնարավոր է կա-տարել տարբեր արատների և դեֆորմացիաների հետևանքով առաջացած բյուրեղային ցանցի կարողացվածքային աղավաղումների ուսումնասիրություններ

[34,35]: Ներկայումս առաջարկվել են նոր տեսակի ինտերֆեյսայիններ, իսկ եռաթիթեղ ռենտգեն-յան ինտերֆեյսային կառավարում են բյուրեղային արատների ուսումնասիրություններ:

Ռենտգենյան ալիքները լայնորեն կիրառվում են նաև ոչ բյուրեղային նյութերի կառուցվածքային անհամասեռությունների ուսումնասիրություններում: Նյութերի կառուցվածքի ուսումնասիրությունը հիմնված է առարկայում ռենտգենյան ալիքների կլանման և բեկման երևույթի վրա: Բավականաչափ ուժեղ կլանող նմուշներում արդյունավետ է պատկերի ցայտուկությունը, որն ստացվում է նրանում տարածվող ալիքի անհամասեռ կլանման արդյունքում, իսկ թույլ կլանող (օրինակ՝ կենսաբանական) նմուշում բեկումը գերակշռում է կլանումը, և ավելի արդյունավետ է դառնում բեկման երևույթը [36]: Այս դեպքում նյութի ներքին կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունը պարունակվում է առարկայի միջով անցած ալիքի փուլում, որի պատճառով ստացված պատկերի ցայտուկությունը կոչվում է փուլային ցայտուկություն, իսկ ուսումնասիրության եղանակները՝ փուլային ցայտուկության եղանակներ:

Առարկաների ներքին կառուցվածքի ուսումնասիրման մեկ այլ եղանակ է ռենտգեն-յան հոլոգրաֆիան: Ներկայումս առաջարկված են տարբեր ռենտգենյան հոլոգրաֆիա-կան սխեմաներ. հոլոգրաֆիական սխեմաներ ռենտգենյան բյուրեղագիտությունում [37], ատոմական լուծույթային հոլոգրաֆիա [38], ռենտգենյան ֆլյուորեսցենսային հոլոգրաֆիական սխեմաներ [39], ռենտգենյան հոլոգրաֆիա խճանկարային բյուրեղ-ների համար [40], ռենտգենյան դիֆրակցային ցրման հոլոգրաֆիա [41], ցանցային դիֆրակտամբ ռենտգենյան հոլոգրաֆիա [42]:

Օպտիկայում օգտագործվում են տարբեր հոլոգրաֆիական սխեմաներ. ֆրենելյան հոլոգրաֆիա՝ Գաբորի առանցքային և ոչ առանցքային, ֆուրիե-հոլոգրաֆիա, ինտերֆեյսային հոլոգրաֆիա: Ներկայումս ներկայացված են նմանատիպ հոլոգրաֆիա-կան եղանակներ ռենտգենյան հաճախությունների տիրույթում: Հարկ է նշել, որ բոլոր ռենտգենյան հոլոգրաֆիական եղանակներում վերականգնումը կարելի է իրականացնել լույսով կամ թվային եղանակով: Ռենտգենյան ոչ կոհերենտ ինտերֆեյսային հոլոգրաֆիան առաջարկվել և տեսականորեն ուսումնասիրվել է [43]-ում:

Երրորդ սերնդի սինթետիկ նյութերը և ռենտգենյան ազատ էլեկտրոնային լազերները հնարավորություն են ընձեռել առաջարկելու ռենտգենյան հոլոգրաֆիական եղանակներ առանց բրեգման անդրադարձման կիրառման՝ առանցքային Գաբորի հոլոգրաֆիա [44] և ֆուրիե-հոլոգրաֆիա [45]: Նանոչափային նմուշներ են հետազոտվել [46]-ում, իսկ [47]-ում առաջարկվել է այդպիսի բյուրեղների ձևի, խտության և դեֆորմացիայի որոշման կինեմատիկական բրեգման 3D ֆուրիե-հոլոգրաֆիական եղանակ: Վերջին դեպքում օգտագործվել է ուսումնասիրվող նանոբյուրեղը և մեկ այլ՝ հենային բյուրեղ, որն ունի նանոբյուրեղի անդրադարձնող հարթությունների միջհարթություն-նային հեռավորությունը շատ մոտ միջհարթություն-նային հեռավորություն, այնպես որ իրականացվել է բրեգման

կինեմատիկական դիֆրակցիա այդ երկու բյուրեղներից և որպես հոլոգրամ գրանցվել է առաջացած կինեմատիկական բրեգյան ալիքների ինտերֆերենցային պատկերի ուժգնությամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ռենտգենյան ճառագայթման դիսամիկական տեսության դեռևս չլուծված ընդհանուր տեսական հարցերից են՝ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ ընկնող ալիքի տարամիտության հաշվառումը, Էյկոնալի տեսության բարելավումը, ոչ գծային դիֆրակցիայի ուսումնասիրումը. բյուրեղների անկատարելության ներքին ռոշման ինտերֆերաչափական եղանակում տեսության բարելավումը, որը հնարավորություն կտա վերլուծելու ինտերֆերաչափի տարբեր թիթեղներում դեֆորմացիաների ազդեցությունը մուարի պատկերների ձևավորման վրա, առարկաների կոհերենտ դիֆրակտային հոլոգրաֆիական եղանակների առաջարկումը և դրանց տեսության զարգացումը:

ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆԸ

- Չարգացվել են.
1. ռենտգենյան ալիքների բրեգյան դիֆրակցիայի տեսությունն՝ հաշվի առնելով ալիք-ների լայնությանը ստիպիտ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ ըստ կոորդինատների կորոդկարգի ածանցյալները,
 2. այդ տեսության Էյկոնալային մոտավորությունը,
 3. ռենտգենյան ալիքների դիսամիկական դիֆրակցիայի տեսությունները կարգի ոչ գծայնությամբ բյուրեղում:
 4. Արտածվել են Տակագիի երրորդ կարգի ոչ գծային ստացիոնար և ժամանակային հավասարումները:
 5. Ներկայացվել է փորձած մակերևույթով բյուրեղով կիզակետման Էյկոնալի տեսությունը:
 6. Չարգացվել է Էյկոնալի տեսությունն՝ եռաթիթեղ ինտերֆերաչափում մուարի գծերի առաջացման մեխանիզմի բացատրության համար:
 7. Առաջարկվել են երկու ճեղքի վրա դիֆրակցիայի (Յոնգի գծեր) ու դիֆրակտային հոլոգրաֆիական մեկբյուրեղային ֆրաունհոֆերյան, ֆուրիե-հոլոգրաֆիական և ինտերֆերաչափական սխեմաներ:

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԺԵԹԸ

Բյուրեղներում ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի տեսության բարելավումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու սխեմաներ, երբ կարևոր է ընկնող ալիքի տարամիտությունը դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ: Չարգացված Էյկոնալային տեսությամբ կարելի է ճշգրիտ հաշվարկել (ուժգնության բաշխում, կիզակետային հեռավորություններ, լուծունակություն) փորձած մակերևույթով բյուրեղով սխեմաներ, որոնցում բյուրեղն օգտագործվում է որպես ոսպնյակ, կոլիմատոր, առարկայի պատկերի և միկրոփնջերի ձևավորիչ: Եռաթիթեղ ինտերֆերաչափում տեղայնացված արատների դեպքում ներկայացված տեսությունը հնարավորություն է տալիս

կանխատեսելու, թե ինչ պիտի մուարի գծեր կառաջանան, և կատարելու արատի պարամետրերի որոշում: Առաջարկված հոլոգրաֆիական սխեմաներով հնարավոր է վերահսկել առարկայի պատկերը լույսով և թվային եղանակով, ուսումնասիրել նյութերի խտության բաշխումը: Շնորհիվ ռենտգենյան և վերականգնող լուսային ալիքների ալիքի երկարությունների տարբերության՝ կարելի է վերականգնել առարկայի խոշորացված պատկերը՝ ներկայացված հոլոգրաֆիական սխեմաները կիրառելով նաև ռենտգենյան մանրադիտակում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները

1. Բյուրեղներում դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ տարամետ փնջերի դինամիկական դիֆրակցիայի տեսությունն ընդլայնում է դինամիկական դիֆրակցիայի ընդհանուր տեսությունը և անհրաժեշտ է փորձարարական համապատասխան պայմաններում կանխատեսումների և փորձի արդյունքների ճշգրիտու համարժեք մեկնաբանման համար:
2. Գրինի ֆունկցիայի կառուցումն ընկնող կամայական տիպի ռենտգենյան ալիքի դեպքում հնարավորություն է տալիս բյուրեղում դիֆրակտվող ալիքների լայնության արտահայտելու Գրինի ֆունկցիայի և մակերևույթին ընկնող ալիքի լայնության՝ ըստ մուտքի մակերևույթի փաթույթի տեսքով:
3. Չարգացված տեսության հիման վրա Լաուեի և Բրեգի երկրաչափությունների դեպքերում դինամիկական դիֆրակցիայի ուսումնասիրությունները բացահայտում են լայնության կախումները դիֆրակցիայի հարթության մեջ և դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ Բրեգի անկյունային շեղումներից և դրանից հետևող դինամիկական դիֆրակցիայի նոր առանձնահատկություններ:
4. Չարգացված տեսությամբ հնարավոր է ստանալ դինամիկական դիֆրակցիային մասնակցող փնջերի տարածական և ժամանակային կոհերենտության ճշգրիտ գնահատականներ՝ հաշվի առնելով աղբյուրի չափերը դիֆրակցիայի հարթության մեջ ու դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ, ինչպես նաև ընկնող փնջի ալիքային ճակատի երկչափ կորությունը:
5. Չարգացված տեսությունը հնարավորություն է տալիս կառուցելու Լաուեի և Բրեգի երկրաչափություններին համապատասխանող ճոճման կորերը՝ կախված ընկնող ալիքի՝ դիֆրակցիայի հարթության մեջ և դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղություններով Բրեգի անկյունից շեղումից:
6. Էյկոնալի զարգացված տեսությունը ճշգրիտ է նկարագրում դանդաղ փոփոխվող դաշտերի տարածման հետագծերն ու հնարավորություն է տալիս ասիմպտոտական վերլուծության տարբեր կարգերում Լաուեի ու Բրեգի երկրաչափության դեպքերում որոշելու դիֆրակտվող ալիքների լայնության երկչափ փորվածքով մակերևույթ ունեցող բյուրեղով իրականացվող կիզակետման կիզակետի չափերը, կիզակետային հեռավորությունը և կիզակետի շուրջն ու ժգնության բաշխումը:
7. Տակագիի հավասարումների Էյկոնալի տեսության տեղափոխման

հավասարումները հնարավորություն են տալիս ասիմպտոտական վերլուծության կամայական կարգում դաշտի լայնության արտահայտելու ըստ հետագծի ինտեգրալի տեսքով, և ուսումնասիրելու դինամիկական դիֆրակցիան դանդաղ փոփոխվող դեֆորմացիաներով բյուրեղներում:

8. Ոչ գծային հավասարումների համար ճշգրիտ լուծումները Լաուեի երկրաչափության հարթալիքային դեպքում հանգեցնում են ոչ գծային ճոճանակային երևույթի և ոչ գծային էքստինկցիոն երկարության:
9. Լաուեի դեպքում ոչ գծային հավասարումների լուծումից հետևում է նոր ճոճանակային երևույթ՝ անդրադարձման և անցման գործակիցների պարբերական կախումն ընկնող ալիքի ուժգնությունից:
10. Ոչ գծային դինամիկական դիֆրակցիայի նկարագրության համար զարգացված թվային եղանակի հիման վրա հնարավոր է կառուցել ճոճման կորերը Լաուեի երկրաչափության դեպքում և ապացուցել, որ ընկնող ալիքի ուժգնության աճի հետ այդ կորերը տեղաշարժվում են դեպի փոքրանկյունային տիրույթ:
11. Չարգացված տեսության մեջ բացահայտվել է, որ ոչ գծային դիֆրակցիայի դեպքում նույնպես տեղի ունի Բորմանի երևույթը: Նեղ փնջի ոչ գծային դիֆրակցիայի դեպքում հաստ բյուրեղում թվային հաշվարկով հայտնաբերվել են անցնող և դիֆրակտված ալիքների պիկերի՝ Բորմանի երևույթով և ոչ գծայինությամբ պայմանավորված տեղաշարժման տարբերությունները գծային դիֆրակցիայի դեպքի համեմատ:
12. Բրեգի երկրաչափության դեպքում ոչ գծային տեսության ճշգրիտ լուծումներից, ինչպես նաև թվային հաշվարկներերով, հնարավոր է որոշել լրիվ անդրադարձման տիրույթի չափերը, դրա կենտրոնի դիրքը և սահմանները՝ կախված ընկնող ալիքի ուժգնությունից: Ընկնող ալիքի ուժգնության մեծացմանը զուգընթաց լրիվ անդրադարձման տիրույթի մեծանկյունային սահմանը և կենտրոնը շեղվում են դեպի փոքրանկյունային տիրույթ, լրիվ անդրադարձման տիրույթի փոքրանկյունային սահմանը կախված չէ ընկնող ալիքի ուժգնությունից, իսկ ընկնող ալիքի ուժգնության որոշակի սահմանային արժեքից մեծ արժեքների համար լրիվ անդրադարձման տիրույթ գոյություն է ունի:
13. Չարգացված տեսության մեջ հնարավոր է որոշել երկու ճեղքի վրա դինամիկական դիֆրակցիայի գծերի (դինամիկական դիֆրակտային Յունգի գծեր) տեսքը, պարբերությունը, ուժգնության բաշխումը: Դիֆրակցիայի այս սխեման նաև դինամիկական դիֆրակտային Ռելեյի և Մայքելսոնի աստղային ինտերֆերաչափերի սխեմա է և կարող է հիմք ծառայել դինամիկական դիֆրակտային ֆուրիե-հոլոգրաֆիայի համար:
14. Առաջարկված ռենտգենյան դինամիկական դիֆրակտային միաբյուրեղային և ինտերֆերաչափական հոլոգրաֆիական սխեմաները հնարավորություն են տալիս գրանցելու առարկայի հոլոգրամը և լույսի միջոցով այն լուսավորելով կամ թվային եղանակով վերականգնելու առարկայի պատկերը:
15. Հաստ կլանող բյուրեղի ելքի մակերևույթին ստացված ուժգնության պատկերը կոմպլեքս անցման գործակցի ֆուրիե-

պատկերն է կամ Ֆրաունհոֆերի ու Ֆրենելի՝ օպտիկայից հայտնի բաշխումների նմանակը:

16. Տեսականորեն հաստատվել է մուլտիպատկերների առաջացման մեջ ինտերֆերաչափի տարբեր թիթեղների ներդրումների տարբերությունը: Հայելային թիթեղը փոփոխության մեջ ներդրում է տալիս մյուս թիթեղների նկատմամբ տեղաշարժով և դեֆորմացիաներով, մինչդեռ ճեղքիչ և վերլուծիչ թիթեղները վերադարձնում են փոփոխության մեջ ներդրում են տալիս միայն տեղաշարժի վեկտորներով:
17. Էլեկտրոնամանրադիտակային մուլտիպատկերները երկու վերադարձնող ցանցերի սահմանի տեղաշարժի վեկտորների տարբերության հաստատուն արժեքների գծերն են: Էլեկտրոնամանրադիտակային փոփոխային ցայտունության պատկերները ոչ միայն կատարյալ, այլ նաև սահուն փոփոխվող դեֆորմացիաներով հաստատուն-րեդիելի մակերևույթի վրա ատմական հարթությունների պրոյեկցիայի ուղիղ պատկերն են:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՐԿՈՒՄԸ

Աշխատանքի արդյունքները գեկուցվել են ԵՊՀ պինդ մարմնի ֆիզիկայի, օպտիկայի, ակադեմիկոս Վ.Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, ակադեմիկոս Գ.Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի, Հայաստանի ազգային ազրարային համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և ջերմատեխնիկայի, Հայաստանի ազգային պրոփոփոխական համալսարանի ֆիզիկայի, Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի ընդհանուր ֆիզիկայի և քվանտային նանոկառուցվածքների ամբիոնների սեմինարներում, ներկայացվել “4th International Symposium, Optics and its Applications (OPTICS-2016) Yerevan-Ashtarak, Armenia, July 25-28”, “2016XTOP 2016 13th Biennial Conference on High-Resolution X-Ray Diffraction and Imaging, Brno, Czech Republic, September 4–8 2016”, “18th International Conference on X-Ray and Neutron Optics, Barcelona, August 11–12, 2016”, “18th International Conference on X-Ray and Neutron Optics Bali, Indonesia, October 13–14”, “18th International Conference on X-Ray and Neutron Optics, Singapore, November 21–22, 2016” միջազգային գիտաժողովներում:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Ատենախոսության թեմայով հրատարակվել են 31 հոդված, որոնց ցանկը տրված է սեղմագրի վերջում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԾԱՎԱԼ Ը

Ատենախոսությունը բաղկացած է Ներածությունից, երկու մասից, ութ գլուխներից, առաջին և երկրորդ մասերի եզրակացություններից, մեկ հավելվածից, գրականության ցանկից՝ 282 անուն հղումներով և շարադրված է 275 էջում, ներառյալ 86 նկարները և երկու աղյուսակները: Ատենախոսության հիմնական արդյունքները հրատարակված են [252-282] աշխատանքներում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին մասը նվիրված է տարբեր ֆիզիկական

պայմաններում դինամիկական դիֆրակցիայի հիմնական հավասարումների ճշգրտմանը:

Առաջին գլուխը նվիրված է դինամիկական դիֆրակցիայի հավասարումների այն ուղղումների հաշվառմանը, երբ դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ ընկնող փնջի տարամիտության հետևանքով կարևոր են ըստ այդ ուղղության լայնությաների երկրորդ կարգի ածանցյալները:

§1.1-ում ուսումնասիրվել է դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ լայնությաների երկրորդ կարգի ածանցյալների ազդեցությունը դիֆրակցիայի վրա: Որոշվել է կատարյալ բյուրեղում դիֆրակտային խնդրի ուշացող Գրինի ֆունկցիան՝

$$G(\mathbf{r}_p, -\mathbf{r}) = \frac{\exp\left(-i\frac{\pi}{4}\right)}{8\pi k^2 \sin 2\theta} \sqrt{\frac{2\pi k \cos\theta}{z_p - z}} \exp\left[ik \frac{(y_p - y)^2}{2(z_p - z)}\right] \times \int_0^\infty (\sigma \sqrt{(z_p - z)^2 \tan^2\theta - (x_p - x)^2}) H(z_p - z) H[(z_p - z)\tan\theta - |x_p - x|], \quad (1)$$

որտեղ \mathbf{r}_p -ն դիտման կետի, իսկ \mathbf{r} -ն ընթացիկ կետի շառավիղ-վեկտորներն են, k -ն ալիքային թիվն է, θ -ն՝ Բրեգի անկյունը, $\sigma = k(\chi_h \chi_{-h})^{1/2} / 2\sin\theta$, $H(x)$ -ը Յեվիսայ դիֆունկցիան է, \int_0^∞ -ն՝ Բեսելի առաջին սերի գրոկարգի ֆունկցիան: Օգտվելով Գաուսի բանաձևից՝ անցած և դիֆրակտված ալիքների լայնությաները բյուրեղի ներսում ներկայացվել են հետևյալ տեսքով՝

$$E_{0,h}(\mathbf{r}_p) = 4ik \cos\theta \int_s G \frac{\partial^2 E_{0,h}}{\partial y^2} dS_z - 4k^2 \cos^2\theta \int_s \left(G \frac{\partial E_{0,h}}{\partial z} - E_{0,h} \frac{\partial G}{\partial z} \right) dS_z + 4k^2 \sin^2\theta \int_s \left(G \frac{\partial E_{0,h}}{\partial x} - E_{0,h} \frac{\partial G}{\partial x} \right) dS_x, \quad (2)$$

որտեղ E_0 -ն և E_h -ն անցած և դիֆրակտված ալիքների լայնությաներն են, y -ների առանցքն ուղղահայաց է դիֆրակցիայի հարթությանը, z -երի առանցքն ուղղված է անդրադարձնող հարթությունը, x -երի առանցքը հակազուգահեռ է դիֆրակցիայի և վեկտորին, ինտեգրումը կատարվում է ըստ S մուտքի մակերևույթի, dS_x -ն և dS_z -ն ինտեգրման մակերևույթի ընթացիկ dS տարրի բաղադրիչներն են x և z առանցքների վրա:

§1.2-ում ուսումնասիրվել է Լաուենի անհամաչափ դիֆրակցիան: Դիֆրակտված ալիքի լայնության համար ստացվել է արտահայտություն կետային աղբյուրից առաքված գնդա-յին ընկնող ալիքի համար: Չափվել է առնվել «աղբյուր-բյուրեղ» հեռավորությունը: Ցույց է տրվել, որ Բրեգի անկյունից շեղումը մասնակցում է երկու գումարելիների տեսքով, առաջինը՝ դիֆրակցիայի հարթության մեջ դիտման կետի x կոորդինատից կախված է գծայնորեն, իսկ մյուսը՝ այդ հարթությանն ուղղահայաց ուղղությամբ և դիտման կետի y կոորդինատից կախված է քառակուսայնորեն: Գումարելով աղբյուրի մեկ կետից և մեկ

հաճախությունը անաբաված ալիքից դիֆրակտված ալիքի ուժգնությունն ըստ աղբյուրի չափերի և հաճախությունների, ստացվել է արտահայտություն փոխադարձ ուժգնության համար, գնահատվել են տարածական և ժամանակային կոհերենտության վրա դրվող այն պահանջները, որոնց բավարարման դեպքում դիֆրակտված ալիքի ուժգնության բաշխումը գրեթե մնում է հաստատուն:

§1.3-ում, օգտվելով տեղային հարթ ալիքի գաղափարից, ըստ որի աղբյուրից մեծ հեռավորության դեպքում էլքի մակերևույթին ստացված ուժգնության բաշխումն ըստ կո-որդինատի համարժեք է անդրադարձման գործակցի կախվածությանը Բրեգի անկյուն-նային շեղումից, Լաուեի համաչափ դեպքում ստացվել են ճոճման կորերը դիֆրակցիայի հարթության մեջ և դրան ուղղահայաց ուղղությունը: Յաշվարկային տեղագիրը և ճոճման կորը դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ տրված են նկ.1-ում: Անկյուննային շեղման և կոորդինատների կապը տրվում է

$$\Delta\theta = \Delta\theta_1 + \Delta\theta_2 = \frac{x \cos\theta}{L_s} - \operatorname{tg}\theta \frac{y^2}{2L_s^2} \quad (3)$$

առնչությամբ, որտեղ L_s -ը «աղբյուր-բյուրեղ» հեռավորությունն է:

§1.4-ում ուսումնասիրվել է Բրեգի դիֆրակցիան՝ դիֆրակցիայի հավասարումներում լայնույթների երկրորդ կարգի ածանցյալների հաշվառմամբ: Կատարյալ բյուրեղի դեպքում ստացվել է Գրինի ֆունկցիան՝

$$\begin{aligned} \tilde{G}(\mathbf{r}, \mathbf{r}') = & U(\mathbf{r}, \mathbf{r}') \{ J_0(\sigma \sqrt{(Z-Z')^2 \operatorname{tg}^2\theta - (X-X')^2}) H(Z-Z') H[(Z-Z') \operatorname{tg}\theta - |X-X'|] - \\ & - J_0(\sigma \sqrt{(Z_0-Z')^2 \operatorname{tg}^2\theta - (X_0-X')^2}) H(Z_0-Z') H[(Z_0-Z') \operatorname{tg}\theta - |X_0-X'|] \}, \end{aligned} \quad (4)$$

որտեղ


$$U(\mathbf{r}, \mathbf{r}') = \exp\left(-i\frac{\pi}{4}\right) (8\pi k^2 \sin 2\theta)^{-1} \sqrt{2\pi k \cos\theta / (Z-Z')} \exp\left[ik(y-y')^2 \cos\theta / 2(Z-Z')\right],$$

\mathbf{r} -ը դիտման կետի, իսկ \mathbf{r}' -ը ընթացիկ կետի շառավիղ-վեկտորներն են, X և Z առանցքներն ուղղված են դիֆրակցիայի վեկտորին հակադուգահեռ և անդրադարձ-

նող հարթություններին ուղղահայաց, դեպի բյուրեղի խորքը: X_0 -ն

և Z_0 -ն բյուրեղից դուրս Q օժանդակ կետի կոորդինատներն են, որն ընտրվում է այնպես, որ (4) Գրինի

ֆունկցիան մուտքի մակերևույթին դառնա գրո: Օգտվելով (2)-ից և (4)-ից, կիսաանվերջ բյուրեղի համար գտնվել են անցած և անդրադարձած ալիքների լայնույթները բյուրեղի ներսում և մուտքի մակերևույթին, ընդ որում, անդրադարձած դաշտի լայնույթն ունի հետևյալ տեսքը՝



Նկ.1. **ա** Չափվարկային տեղագիր տեղային հարթալիքային մոտավորությամբ և ընկնող ալիքի ճակատի երկչափ կորության հաշվառմամբ. **բ**. ճոճման կորը $x=0$ գծի վրա

$$E_h(\mathbf{r}) = 4ik^2 \sqrt{\frac{X_h}{X_h'}} \sqrt{\frac{Y_0}{Y_h}} \sin 2\theta \int_s E_0 U(\mathbf{r}, \mathbf{r}') \frac{J_1(\tilde{\sigma}(\mathbf{x} - \mathbf{x}'))}{\mathbf{x} - \mathbf{x}'} H(\mathbf{x} - \mathbf{x}') dx' dy', \quad (5)$$


որտեղ ինտեգրումը կատարվում է ըստ մուտքի մակերևույթի, X_h -ը և X_h' -ը դիֆրակցիայի h և h' վեկտորներին համապատասխանող բևեռացվելիության ֆունկցիոնալներն են, α -ն անդրադարձնող հարթությունների և մուտքի մակերևույթի կազմած անկյունն է, $Y_0 = \sin(\theta - \alpha)$, $Y_h = \sin(\theta + \alpha)$, E_0 -ն անցած ալիքի լայնության է մուտքի մակերևույթին և արտահայտվում է ընկած ալիքի լայնությամբ՝ ըստ սահմանային պայմանների, $\tilde{\sigma} = \sigma \sqrt{Y_0 Y_h} / \cos \theta$, J_1 -ը Բեսելի առաջին սերիալի առաջին կարգի ֆունկցիան է: Դիֆրակցիայի ալիքի լայնության համար ստացվել է արտահայտությունները չափեր ունեցող աղբյուրի կամայական կետից առաքված գնդային ալիքի դեպքում: Գումարելով ուժգնությունն ըստ աղբյուրի կետերի կոորդինատների և հաճախությունների, ստացվել է փոխադարձ ուժգնության արտահայտություն, որի հիման վրա ստացվել են տարածական և ժամանակային կոհերենտության վրա դրվող պահանջները, որոնց իրականացման դեպքում ուժգնության բաշխումը գրեթե չի փոփոխվում:

§1.5-ում ուսումնասիրվել է գնդային ալիքի դիֆրակցիան ալիքային ճակատի երկչափ կորության հաշվառմամբ: Ուսումնասիրվել է ուժգնության բաշխումը՝ կախված «աղբյուր-բյուրեր» հեռավորությունից: Այս դեպքում լայնության կախումն ընկնող փնջի ուղղությունից որոշվում է Բրեգի անկյունից շեղման

$$\beta(x, y) = k \sin \theta \left(\frac{X_0}{\sin 2\theta} + \Delta\theta - \frac{x \sin \theta}{L_s} - \frac{y^2 \tan \theta}{2L_s^2} \right) \quad (6)$$

պարամետրով, որտեղ X_0 -ն բյուրերի բևեռացվելիության ֆունկցիոնալ

վերլուծության գրո կարգի բաղադրիչն է: Օգտվելով տեղային հարթ ալիքի գաղափարից, ստացվել է ճոճ-ման կորը՝ որպես մուտքի մակերևույթին դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ ուժգնության բաշխման կախում կոորդինատներից (նկ.2):



Նկ.2. **u** ճոճման կորը (անդրադարձման գործակիցը) $x=0$ գծի վրա (թվային հաշվարկ), **p**. նույնն ըստ մոտավոր բանաձևի (տես ստեղծագործության 1.76 բաՆաձևը). (հեռավորություն $L_s = 5$ մ)

Երկրորդ գլուխը նվիրված է u' Տակագիի ստանդարտ, u' դիսամիկայան դիֆրակցիայի որոշակի պայմաններին համապատասխանող տեսությունների էյկոնալի հավասարումների մանրամասն ուսումնասիրմանը:

§2.1-ում Տակագիի հավասարումների էյկոնալային մոտավորության լայնությաների ասիմպտոտական շարքի բոլոր անդամների համար ստացվել են տեղափոխման հավասարումներ, դրանց լուծումները ներկայացվել են ըստ հետագծի ինտեգրալի տեսքով: Տեղափոխման հավասարման գումարման միջոցով ստացվել է հավասարում լրիվ լայնությանի համար՝

$$\frac{d E_{0,h}^{(s)}(s)}{ds E_{0,h}^{(0)}(s)} = \frac{i}{E_{0,h}^{(0)}(s)} \frac{\partial^2 E_{0,h}}{\partial s_0 \partial s_h}, \quad (7)$$

որտեղ s -ը պարամետր է հետագծի երկայնքով, $E_0^{(0)}(s)$ -ն և $E_h^{(0)}(s)$ -ը լայնությաներն են գրոյական մոտավորությամբ, s_0 -ն և s_h -ը՝ կոորդինատներն անցած և դիֆրակտված ալիքների տարածման ուղղություններով, ընդ որում

$$E_0^{(0)}(s) = E_0^{(0)}(0) \exp\left(-\int_0^s \frac{\partial^2 \Phi}{\partial s_0 \partial s_h} ds'\right),$$

$$E_h^{(0)}(s) = E_h^{(0)}(0) \exp\left(-\int_0^s \frac{\partial}{\partial s_0} \left(\frac{\partial \Phi}{\partial s_h} + k \frac{\alpha}{2}\right) ds'\right), \quad (8)$$

որտեղ Φ -ն էյկոնալն է, $\alpha = -\frac{2}{k} \partial \mathbf{h} / \partial s_h$ -ը՝ Բրեգի պայմանից տեղային շեղման պարամետրը, α -ն՝ դեֆորմացված բյուրեղի ատոմների շեղման ֆունկցիան, ինտեգրումը կատարվում է ըստ հետագծի:

§2.2-ում ուսումնասիրվել է էյկոնալային մոտավորությունը, հաշվի առնելով ընկնող ալիքի ճակատի երկչափ կորությունը: Դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ կորորդինատի երկրորդ կարգի ածանցյալներ պարունակող դիֆրակցիայի հավասարումների համար ստացվել է էյկոնալի հավասարում՝

$$\left(\frac{\partial\Phi}{\partial y}\right)^4 + 4k \cos\theta \frac{\partial\Phi}{\partial z} \left(\frac{\partial\Phi}{\partial y}\right)^2 + 4k^2 \left[\left(\frac{\partial\Phi}{\partial z}\right)^2 \cos^2\theta - \left(\frac{\partial\Phi}{\partial x}\right)^2 \sin^2\theta \right] - k^4 X_h X_h^* = 0: \quad (9)$$

Գտնվել է լրիվ ինտեգրալը կատարյալ բյուրեղում՝

$$\Phi = C_1 x + C_2 y \pm z \frac{\sqrt{C_1^2 \sin^2\theta + \sigma^2}}{\cos\theta} - C_2^2 \frac{z}{2k \cos\theta} + C_3, \quad (10)$$

որտեղ C_1 -ը, C_2 -ը և C_3 -ը կամայական հաստատուններ են, "+" և "-" նշանները համապատասխանում են թույլ և ուժեղ կլանվող ճյուղերին: Նկարագրված է եղանակ, որով տված սահմանային պայմանների դեպքում լրիվ ինտեգրալներով կարելի է որոշել էյկոնալը և հետագծերը:

§2.3-ում զարգացվել է Լաուեի դեպքում երկչափ մուտքի և ելքի փորված մակերևույթով բյուրեղներով կիզակետման էյկոնալի տեսություն: Ստացվել են արտահայտություններ կիզակետային հեռավորության, կիզակետի չափերի, դրա շուրջն ուժգնության բաշխման և կիզակետում ուժգնության աճի համար:

§2.4-ում ուսումնասիրվել է ոչ հարթ մուտքի մակերևույթով բյուրեղով փնջի կիզակետումը Բրեգի համաչափ դեպքում: Գտնվել է լրիվ ինտեգրալը, էյկոնալը և հետագծերը բյուրեղում, լայնությաները մուտքի մակերևույթին և դիֆրակտված դաշտի լայնությամբ վաղուղում: Գտնվել են կիզակետային հեռավորությունները վաղուղում:

$$F_x = -\frac{R_x \sin\theta}{2ctg\theta\Delta\theta}, \quad F_y = -\frac{R_y}{2\cos\theta\Delta\theta}, \quad (11)$$

որտեղ R_x -ը և R_y -ը պարաբոլական փորվածքով մուտքի մակերևույթի կորության շառավիղներն են դիֆրակցիայի հարթության մեջ և դիֆրակցիայի հարթությանն ուղղահայաց ուղղությամբ: (11) բանաձևից հետևում է կետային կիզակետման պայմանը՝ $R_y = R_x \sin^2\theta$:

Իրական պատկերի ձևավորման համար անհրաժեշտ է, որպեսզի $R_x, R_y < 0$ (գոգավոր մակերևույթ): Գտնվել են կիզակետի չափերը կիզակետային հարթության մեջ, կիզակետի շուրջն ուժգնության բաշխումը դիֆրակցիայի հարթության մեջ և դրան ուղղահայաց ուղղությամբ:

Երրորդ գլխում ուսումնասիրվել է մեներանգ ալիքի դիֆրակցիան երրորդ կարգի ոչ գծային բևեռացվելիությամբ բյուրեղում:

§3.1-ում դասական և քվանտամեխանիկական խոտորումների տեսությամբ ստացվել են արտահայտություններ երրորդ կարգի ոչ

գծային բևեռացվել իու թյան համար, գնահատված է I_{cr} ընկնող ալիքի այն ուժգնությունը, որի դեպքում ոչ գծային ներդրումը ցրման մեջ հավասարվում է գծային ցրմանը, գնահատված է երրորդ կարգի ոչ գծային բևեռացվել իու թյան արժեքը և եզրակացվել է, որ ոչ գծային դիֆրակտային երևույթ-ները կարող են դիտվել ներկայումս հասանելի ուժգնությամբ ռենտգենյան աղբյուրների օգտագործմամբ: Արտածվել են դիֆրակցիայի Տակագիի երրորդ կարգի ոչ գծային հավասարումները: Ցույց է տրվել, որ եթե ընկնող ալիքում միաժամանակ առկա են σ - և π -բևեռացումները, ապա ոչ գծային անդամների առկայությամբ հավասարումները չեն բաժանվում անկախ բևեռացումների: Եթե ընկնող ալիքն ունի այդ անկախ բևեռացումներից մեկը, ապա տարածվում է այդ բևեռացմամբ ալիքը: Ընկնող σ -բևեռացմամբ ալիքի երրորդ կարգի ոչ գծային հավասարումները կատարյալ բյուրեղում երկալիքային դիֆրակցիայի դեպքում ունեն հետևյալ տեսքը`


$$\begin{aligned} & \frac{2i\partial E_0}{k\partial s_0} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}E_0^*E_h E_0 \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right) + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_0^*E_h \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right) E_h = 0, \\ & \frac{2i\partial E_h}{k\partial s_h} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}E_0^*E_h E_h \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right) + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_0^*E_h + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_0E_h^* \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right) E_0 = 0, \end{aligned} \quad (12)$$

որտեղ $\chi^{(1)}$ -ը գծային բևեռացվել իու թյունն է, $\eta^{(3)}$ -ը` երրորդ կարգի ոչ գծային բևեռաց-վել իու թյունը, μ -ն բյուրեղի գծային կլանման գործակիցն է: Երրորդ կարգի ոչ գծային հավասարումների մեքենայական հաշվարկների համար զարգացվել է ձևափոխված թվային կեսքայլային եղանակը, որով ներկայացվել են ընկնող հարթ σ -բևեռացմամբ ալիքի (նկ.3.ա) և բյուրեղին մոտ կետային աղբյուրից առաքված գնդային ալիքի (նկ.3.բ) դեպքում դիֆրակտված ալիքի ուժգնության բաշխումներն ըստ խորության (ոչ գծային ճոճանակային երևույթ) և բյուրեղի ելքի մակերևույթին:


§3.2-ում ուսումնասիրվել են հարթալիքային երրորդ կարգի ոչ գծային երևույթները կատարյալ բյուրեղում Լաուեի համաչափ դեպքում: Չարթ մեներանգ ալիքի դեպքում դիֆրակցիայի պարամետրերի որոշակի արժեքների համար (հանդրադարձման Բրե-գի ճշգրիտ անկյան տակ ընկնող ալիք, արգելված $2h$ անդրադարձում) ստացվել են

ճշգրիտ ուժումներ, ուսումնասիրվել է ոչ գծային ճոճանակային երևույթը, գտնվել է արտահայտությունն էքստինկցիոն երկարության համար` կախված ընկնող ալիքի ուժգնությունից: Չայտնաբերվել է նոր ոչ գծային ճոճանակային երևույթ` սկեռված հաս-տությամբ բյուրեղի ելքի մակերևույթին ուժգնության պարբերական կախումն ընկնող

ալիքի ուժգնությունից (նկ.4): Թվային հաշվարկով ստացվել են ճոճման կորերը բարակ




Նկ.3. **u** Անդրադարձման գործակցի՝ ըստ խորության ճոճանակային տատանումները երրորդ կարգի ոչ գծայնությամբ բյուրեղում, **p**. բյուրեղի ելքի մակերևույթին կետային աղբյուրի ուժգնության բաշխումը երրորդ կարգի ոչ գծայնության դեպքում (թվային հաշվարկ)



Նկ.4. Ոչ գծային անցման (կետագիծ) և անդրադարձման (հոծ գիծ) գործակիցների կախումներն ընկնող ալիքի ուժգնությունից բարակ, սևեռված հաստությամբ բյուրեղում (թվային հաշվարկ)

և հաստ կլանող բյուրեղում: Հաստավել է ոչ գծային Բորմանի երևույթը: Որպես ինքնամակածված բևեռացվելիությամբ միջավայրում ալիքի տարածման հետևանք, Բրեգի պայմանից շեղումն ինքնամակածված է, ինչպես նաև ի հայտ է գալիս անհամաչափությունն Բրեգի պայմանից՝ դեպի մեծ կամ փոքր անկյուններ շեղված ալիքների համար: Հաստ կլանող բյուրեղում լավ են անդրադառնում Բրեգի անկյունից փոքր անկյան տակ ընկած ալիքները:

§3.3-ում կատարյալ կիսասանվերջ բյուրեղում Բրեգի դեպքում ընկնող հարթ ալիքի համար գտնվել է ճշգրիտ լուծում (լրիվ անդրադարձման տիրույթում, **h** անդրադարձման դեպքում արգելված **2h** անդրադարձման պայմաններում), գտնվել են լրիվ անդրադարձման տիրույթի կենտրոնի և լայնության արտահայտություններ՝ կախ-



Նկ.5. Կլանող բյուրեղում ոչ գծային տեսության $R_h(y_r)$ ճոճման կորերն ընկնող ալիքի 0,1 քայլով փոփոխվող ուժգնության $I^{(i)} = 0,1 - 0,7$ արժեքների համար (3-9 կորերը): Ընկնող փնջի չափը դիֆրակցիայի հարթության մեջ 5 գծային էքս-տիսկցիոն երկարություն է: Ցույց են տրված նաև նույն չափի փնջի դեպքում գծային տեսության ճոճման 2 կորը և գծային հարթ ալիքային տեսության 1 ճոճման կորը (թվային հաշվարկ):

ված ընկնող ալիքի ուժգնությունն է: Ցույց է տրվել, որ լրիվ անդրադարձման տիրույթ գոյություն ունի միայն որոշակի առավելագույն ուժգնությունից փոքր ուժգնությունների դեպքում: Թվային հաշվարկով հաստատվել է, որ եթե $2h$ անդրադարձումն արգելված չէ, ստացված արդյունքները հիմնականում համընկնում են ճշգրիտ լուծման հետ: Թվային հաշվարկով ստացվել են ճոճման կորերը՝ կախված ընկնող ալիքի ուժգնությունից (նկ.5): Ընկնող ալիքի ուժգնությունը տրված է $I_{cr}/3$ միավորով, որի դեպքում ոչ գծայնությամբ պայմանավորված ցրումը հավասարվում է գծայինին:

Չորրորդ գլուխը նվիրված է տարածական անհամասեռ մեներանգ ալիքի երրորդ կարգի ոչ գծային դիֆրակցիայի և ռենտգենյան իմպուլսի ժամանակային ոչ գծային դիֆրակցիայի ուսումնասիրմանը:

§4.1-ում մեներանգ անհամասեռ ալիքի դիֆրակցիան ուսումնասիրվել է երրորդ կարգի ոչ գծային հավասարումների (12) համակարգի թվային ինտեգրումով: Ընկնող ալիքի ուժգնության տարբեր արժեքների համար ստացվել են բյուրեղի ելքի մակերևույթին ուժգնության բաշխումները բարակ, թույլ կլանող բյուրեղի և հաստ կլանող բյուրեղի դեպքում: Բրեգի անկյունից ինքնամակածված շեղման հետևանքով, բարակ բյուրեղի ելքի մակերևույթին ստացված բաշխումը, ի տարբերություն գծայինի, անհամաչափ է: Բրեգի անկյունից տարբեր նշանի շեղումներով ճառագայթները տարբեր կերպ են դիֆրակտվում բյուրեղում: Ստացվել են հաստ կլանող բյուրեղի ելքի մակերևույթին բաշխումները տարբեր հաստությունների դեպքում: Ոչ գծային դեպքում անցած և դիֆրակտված ալիքների պիկերը հետևանք են Բորմանի երևույթի և ոչ գծային փոխազդեցության, ուստի պիկերի տեղաշարժը բյուրեղում դիտման կետի խորության մեծացմանը զուգընթաց այլ կերպ է ընթանում, քան գծային դեպքում: Եթե

գծային դեպքում անցած ալիքի պիկը տեղաշարժվում է դիֆրակցիայի վեկտորի ուղղությամբ, իսկ դիֆրակտվածինը փնջի կենտրոնում է, ապա ոչ գծային դեպքում անցածինը տեղաշարժվում է դիֆրակցիայի վեկտորի ուղղությամբ, իսկ դիֆրակտվածինը՝ դիֆրակցիայի վեկտորի ուղղությամբ:

§4.2-ում ստացվել են դինամիկական դիֆրակցիայի ժամանակային երրորդ կարգի ոչ գծային հավասարումները. մասնավորապես՝ σ -բևեռացման համար

$$\begin{aligned} & \frac{2i\partial E_0}{k\partial s_0} + \frac{2i\partial E_0}{k\partial t} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}E_0^*E_h \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_0 + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_0^*E_h \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_h = 0, \\ & \frac{2i\partial E_h}{k\partial s_h} + \frac{2i\partial E_h}{k\partial t} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_0E_h^* + \eta_h^{(3)}E_0^*E_h \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_h + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_0^*E_h + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_0E_h^* \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_0 = 0, \end{aligned} \quad (13)$$

որոնց օգնությամբ կարելի է նկարագրել ժամանակային երրորդ կարգի ոչ գծային դիֆրակցիան: $\tau = t - z/c\cos\theta = t - (s_0 + s_h)/c$ փոփոխականի փոխարինմամբ անցնելով իմպուլսի հետ կապված շարժական համակարգին, ժամանակային հավասարումները բերվել են ստացիոնար հավասարումների.

$$\begin{aligned} & \frac{2i\partial E_{0s}}{k\partial s_0} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_{0s}E_{hs}^* + \eta_h^{(3)}E_{0s}^*E_{hs} \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_{0s} + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_{0s}E_{hs}^* + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_{0s}^*E_{hs} \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_{hs} = 0, \\ & \frac{2i\partial E_{hs}}{k\partial s_h} + \eta_0^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_h^{(3)}E_{0s}E_{hs}^* + \eta_h^{(3)}E_{0s}^*E_{hs} \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_{hs} + \\ & + \left[\chi_h^{(1)} + \eta_0^{(3)}E_{0s}^*E_{hs} + \eta_h^{(3)}(|E_0|^2 + |E_h|^2) + \eta_{2h}^{(3)}E_{0s}E_{hs}^* \right] \exp\left(-\frac{\mu z}{\cos\theta}\right)E_{0s} = 0, \end{aligned} \quad (14)$$


որտեղ $E_{0,hs}(x, z, \tau) \equiv E_{0,h}(x, z, t)$: Այս հավասարումները կարելի է վերլուծաբար կամ թվայնորեն լուծել կատարյալ և դեֆորմացված բյուրեղներում, ինչպես նաև ժամանակից կախված դեֆորմացիաներով բյուրեղներում: Առաջին անգամ այս կերպ առաջարկվել և իրագործվել է ժամանակային հավասարումների ինտեգրման թվային եղանակ: Վերլուծական մոտեցումն այս եղանակով ավելի պարզ է և արդյունավետ: Առաջին անգամ վերլուծաբար ուսումնասիրվել է սահմանափակ ալիքային ճակատով իմպուլսի դիֆրակցիան կատարյալ բյուրեղում: Սահմանափակ ալիքային ճակատով ժամանակից գառուսյան օրենքով փոփոխվող լայնությամբ ընկնող իմպուլսի համար ուսումնասիրվել է դրա տեսքը և ուժգնության բաշխումը բյուրեղում և վակուումում: Գծային դեպքում ընկնող գերկարճ իմպուլսի համար գտնվել է վերլուծական արտահայտություն՝ իմպուլսի տևողության, լայնության ու բարձրության և դիֆրակցիայի վեկտորի նկատմամբ

թեքություն անսկյան համար: Յույց է տրվել, որ հաստատված շարժում կատարող իմպուլսն ունի սեղանի ձև: Դիֆրակտված իմպուլսը վակուումում ունի գուգահեռագծի տեսք, գտնվել է դրահաճախային սպեկտրը: Թվային ինտեգրումով ուսումնասիրվել է սահմանափակ ալիքային ճակատով իմպուլսի ոչ գծային դիֆրակցիան: Կատարվել է իմպուլսի պարամետրերի համեմատություն գծային դեպքի հետ: Ոչ գծային երևույթները բացատրվում են Բրեգի անկյունից ինքնամակածված շեղման պարամետրով, որը հանգեցնում է այդ պարամետրի՝ տարբեր նշանի արժեքներով ալիքների դիֆրակցիայի անհամապատասխանության: Ինքնամակածված բևեռացվել իությունը հանգեցնում է ուժգնության թուլացման, քանի որ բևեռացվել իության գծային և ոչ գծային մասերը ունեն տարբեր նշաններ: Ուսումնասիրվել է սնեռված կետում դիֆրակցիայի տարբեր երկրաչափական տիրույթներում իմպուլսի ուժգնության կախումը ժամանակից, ինչպես նաև ըստ ժամանակի ինտեգրված անցման և անդրադարձման գործակիցների վարքը՝ կախված ընկնող ալիքի ուժգնությունից դիֆրակցիայի տարբեր երկրաչափական տիրույթներում:

Առեսախոսության երկրորդ մասը նվիրված է կոհերենտ դիֆրակտային հոլոգրաֆիայի և ինտերֆերաչափության տեսությանը:

Հինգերորդ գլխում առաջարկվել և տեսականորեն ուսումնասիրվել են երկու ճեղքի վրա ռենտգենյան ալիքի դիֆրակցիան կատարյալ բյուրեղում (նկ.6.ա) և մեկբյուրեղային ֆուրիե-դիֆրակտային հոլոգրաֆիական սխեման:

§5.1-ում ցույց է տրվել, որ երկու ճեղքի վրա դիֆրակցիայի դեպքում բյուրեղի ելքի



նկ.6. ա երկու ճեղքով դիսամիկական դիֆրակցիայի սխեման. $2c$ -ն ճեղքերի կենտրոնների միջև հեռավորությունն է, կոորդինատային համակարգի O սկզբնակետը երկու ճեղքերի միջև-նակետում է, Ox առանցքը հակագուգահեռ է դիֆրակցիայի և վեկտորին, Oz -ն ուղղահայաց է մուտքի մակերևույթին (α -ն՝ ռենտգենյան ճառագայթներ, $ԱԲ$ ՝ անդրադարձնող հարթություններ), բ. ընկնող հարթ, մեներանգ, չբևեռացված ալիքից երկու ճեղքի վրա բյուրեղում առաջացած դիֆրակտված ալիքի ուժգնության բաշխումը ($I_n = |E_{h\sigma}|^2 + |E_{h\pi}|^2, L_s = \infty, \Delta\theta = 0$) (դիսամիկական դիֆրակտային Յունգի գծեր)

մակերևույթին առաջացած ինտերֆերենցային գծերը Յունգի գծեր են, որոնց ուժգնության բաշխումը ներկայացված է նկ.6.բ-ում: Ստացվել է Յունգի գծերի պարբերության արտահայտություն:

Ուսումնասիրվել է Յուևգի գծերի տեսանելի ուղղությամբ՝ կախված ընկնող ալիքի տարածական և ժամանակային կոհերենտության աստիճանից, բևեռացումից, ճեղքերի չափերից, Բրեգի անկյունից շեղումից և «աղբյուր-բյուրեղ» հեռավորությունից: Ներկայացված սխեման կարող է ծառայել որպես և՛ Ռեյչի, և՛ Մայքել-սոնի աստղային ռենտգենյան ինտերֆերաչափ:


§5.2-ում առաջարկվել և տեսականորեն հետազոտվել է մեկբյուրեղային կոհերենտ դիֆրակտային ֆուրիե-հոլոգրաֆիական սխեման (Նկ.7.ա): Դիտարկվում է երկ-ալիքային համաչափ Լաուե դիֆրակցիա կատարյալ բյուրեղում: Բյուրեղի առջև դրվում է երկու ճեղք: ճեղքերից մեկը նեղ է և ձևավորում է նեղ փունջ (կետային աղբյուր), իսկ մյուսում դրվում է առարկան: Հարթ-գուգահեռ, միավոր լայնության փունջն ընկնում է բյուրեղի վրա: ճեղքերով անցած փնջերը բյուրեղի ելքի մակերևույթին ձևավորում են ինտերֆերենցային դաշտ: Նեղ ճեղքով անցած փունջը հենային ալիքն է, իսկ մյուս ճեղքով անցածը՝ առարկայականը: Նշանակելով համապատասխան դիֆրակտված ալիքների լայնությանները $E_{h_{ref}}$ -ով և $E_{h_{obj}}$ -ով, դիֆրակտված դաշտի լայնությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$E_h = E_{h_{ref}} + E_{h_{obj}}, \quad (15)$$

որի համաձայն՝ բյուրեղի ելքի մակերևույթին դիֆրակտված դաշտի ուժգնությունը՝

$$I_h = |E_{h_{ref}}|^2 + E_{h_{ref}} E_{h_{obj}}^* + E_{h_{ref}}^* E_{h_{obj}} + |E_{h_{obj}}|^2: \quad (16)$$

Բյուրեղի ելքի մակերևույթին առաջացած ինտերֆերենցային պատկերը գրանցումից հետո հետազոտվող առարկայի հոլոգրամ է: Յուևգ է տրվել, որ բավականաչափ փոքր առարկայի և բավականաչափ հաստ կլանող բյուրեղի դեպքում առարկայական ալիքի լայնությունը բյուրեղի ելքի մակերևույթին առարկայի լայնության կոմպլեքս անցման գործակցի ֆուրիե-պատկերն է: Առարկայի պատկերի վերականգնումը կարելի է իրա-



Նկ.7. Ռենտգենյան բյուրեղ-դիֆրակտային և ֆուրիե-հոլոգրամի գրանցման սխեման. Ռճ՝ ռենտգենյան ճառագայթներ, 1՝ նեղ ճեղք (կետային աղբյուր),

2՝ ճեղք, որում տեղադրվում է հետազոտվող առարկան, 3՝ առարկա, 4՝ բյուրեղի թիթեղ, 5՝ անդրադարձնող հարթություներ, 6՝ ճեղք, 7՝ հոլոգրամ: Պատկերված է նաև xz կոորդինատային հարթությունը, որը համընկնում է դիֆրակցիայի հարթության հետ: **բ.** Ֆրաունհոֆերյան դիֆրակցիայի հոլոգրամի գրանցման սխեման. 1՝ ռենտգենյան ճառագայթներ, 2՝ առարկա, 3՝ անդրադարձնող հարթություններ, 5՝ ճեղք, 6՝ հոլոգրամ:

կանացնել լույսով կամ թվային եղանակով: Չարգացվել է համապատասխան թվային եղանակ: Գտնվել է եղանակի լուծունակության արտահայտություն: Քննարկվել է կոսինուսարդային դիֆրակցիայի ցանցի հոլոգրամի գրանցումը և լույսով լայնության անցման գործակցի վերականգնումը:

